

፳፻፲፭ ዓ.ም. SW.4

(Եալ. անս թագմ. 1930 էջ 124)

• ८ •

ԽՈՐՀՐԴԱՆՈՒԹԻՒՆ ՄԵՆԱԿՈՐ ԲՆՈՒԹԵԱՆ ՄՔՅ

Հատ անգամներ նստելով հզիսներու
կամ ծովերու վրայ տիրապետող սարերու
կտարին, կամ մենաւոր ըլուրի ճը վրայ,
ինչպէս հիմա, կը սիրեմ դիտել և հիմար
բնութեան և մարդերու հրաշագործութիւն-
ներուն վրայ:

Բարձրաբեր լեռներ այս կամ այն կողմէէ կանգնած քովէ քով, կը ծածկեն համայնապատկերի մէկ մասը, և սակայն դեմացածն ալ անսահման կը տեսնուի:

Թիկունքիս կողմէն բարձրացած պատկանելու ըստ բուրներու շարքը ինչպէս անրիծ ճանապարհ կատարում է առաջային գործությունները, ցածնալում կ կիրարական ընդարձակ հովտներու գործը որոնց վրայ կամար ձգած է բիւրեղեայ երանքին, և այնտեղ՝ ուր իրար կը խառնուի երկնանման գմբէթն ու երկրագնափառ գաշտաները, իբրև լուսաւոր գիծ մը կ'երեւայ Փոքրիկ մաս մը ընդարձակ ծովին, և եւ

աւելի կ'ընդարձակէ տեսարանը, և գը վեր
բացնէ միտքը դէպ ի անհասանելի սահը,
մաններէ Բայց իմ աշքերու իրբեւ զրոսան
և իմ սրտիս որպէս զմայլումն, այս լեռներու
և ծովու մէջ յանգած խորադաշտակի
տարածութիւնն ալ բաւ է, մերթ կը տես,
նուի իրբեւ հրաշակերտ մեծ սրահ մը կա-
պոյտ ձեղունին տակ, ուր իրարու վրա-
դիպուած սպիտակ և փայտուն ամպերու թը-
րաբներ, ինչպէս շատրուաններ և գարա-
գոյրներ որ վերէն ծածանելով գիւղերուն
և դաշտերուն վրայ շուք կը ձգեն. մերի
թուխ կանաչ ալիքներով բարտիներու, եղե-
լիններու և պտղաբեր ծառերու թանձրացեա-
ծով մը՝ որ շամբերու և բազմամարդ քա-
ղաքներու մէջ կը տարածուի:

Երկնաւոյաց զանգակատուններ սահման

պատերով եկեղեցիներու կողքին բարձրացած, կարծես առագաստներ են հանգոյցուածքարձացող կայմերուան, որ հրաշալիքի էն զարդարուած նաև երու տորմիղներ ձեւացը-ներով կը քեն ու կը տանին, և անոնց նաւահանգիստներն են ընդդրձակ գեղերը և աշտարակներով գորդարուած հեռաւոր քառակները, և անոնց կորած ճանապարհը, սպիտակ հետքերով երկայն ակօսներ են, ինչպէս մայրաքաղաքի ընդդրձակ պղոտուածներ։ Եւ որբան այսպիսի մտածութիւններով տարուիմ, այնքան ինձ իրական կը տեսնուի այս երեւոյթը, և կարծես թէ մարդկային ամբողջ աշխատանքը ցրուած այս դաշտին երեսը, կամ դաշտն ինքնին իր չէնքերով, տունկերով յամրաքայլ կը նաև է կ'երթայ դէպ ի ծով, դէպ ի ովկիան, կեռաւոր աշխարհներ, անծանօթ ափունքներ։

կը մոտածեմ այսքան ընդարձակութեան
վրայ՝ քաղաքներու կամ ամսայի վայրերու
մէջ ցրուած մարգոց սրտի խորհուրդներն
ու ձեռքի շարժումները, որոնք աշքին մէջ
կը բովանդակուին և որոնցմէ հեկ մ'ալ առ
կանչիս չի հասնիր՝ գէթ քիչ մը իմանալու
համար թէ այնտեղ ի՞նչ կը կրեն ու ի՞նչ
կը շինեն ։ Եւ այս ոչինչ բանին ալ յաղթել
չկարինարով (որ ինքնին մեծ բան մ'է), գեռ
աւելի մեծ մեծ բաներու կը ձկոտի իմ միտօքս.
այս լեռներու բոլորակին և պատուարէն ալ
անդին, որոնք սահման ձգած են գտառու-
ներու և աշխարհներու, որոնք կը թաքցը-
նեն ինձմէ ազգերու թագաւորութիւններ,
ծովերէն ալ անդին որոնց հազի մէկ փա-
քիկ շրթունքը կը տեսնեմ, ինչպէս փայ-
տոն երից մը ։ Գեռ եւ կուպեմ թափանցել

բազմամրոխ մայրաքաղաքներու սահմաններէն ալ անդին, երկրիս կեղորնը, ժողովորդներու ժխորին մէջ, երկրիս պետութիւններու աշխարհներուն մէջ, ըլլան խաղաղ, ըլլան խռովակիր այս երկնքիս տակ!...

Բայց երր զգայական տեսութիւն կը տըկարանայ, կը նուազի և միտքս իր խորարկութիւններուն մէջ, և հուսկ կը զարնամ վերաստին ինձ մօտ Հորիզոններուն որ աւելի որոշ կը տեսնուին: Եւ մինչդեռ բնութեան այս ամէն բարդութիւնները, շինութիւնները, հերկուած արտիրը, բազմամրդ քաղաքներն ու գեղերը, պանդոկներ և ամսարանցներ, ցոյւած բլուրներու կողերուն և իերանց լանջերուն վրայ, կարծեա լուս ու մունջ քունի մէջ ըլլան, կամ մոռացոթեան մէջ ընդդմաֆ, ահա իմ աշքս և միտքս կը գրաւեն քառաթեւ պարզ նշանները ամէն կողմ տնկուած, որպէս պահապան է հովանի, այն ամէնուն վրայ որ կը տեսնուի տարածութեան մէջ:

Այստեղ իսկ, այս լիրան սուր կատարին վրայ, իմ գլխուս վերեւ իրբեւ գոս ծառ մը տնկուած կայ խաչը, նոյնպէս նաեւ այս քարէ շինուած ալիքներուն ամէնէն բարձր գագաթին վրայ, ուր ամէնէն քաջ իւռնորդը հազիւ կարող է սուրը զնիլ, կանգնած է նա հոն, միակ ձեռակերտը, միակ յիշասակը այնքան տաժանելի աշխատանքին և վերելքին, միբառուած սասի և ծիւն ձեռքերու մէջ, ամպրոպներու մըրիիկին մէջ ուր ոչ արծիւ և ոչ անդզ կարող են հանճիլ (որովաշետեւ չկատեւ չկայ հոն ոչ կենդնիի և ոչ բրոյի հետք) և հոն է որ կը բարձրանայ Քիսուսի նշանը, ինչպէս կենաքի և մահուան ճանապարհն մէջտեղը և երկութին ալ հաղորդակից: Այսաւասիկ այս համեստածեւ երկու էեռնուու գագաթներուն ալ մէկ հատ առանձին խաչեր, նոյնը կը տեսնեմ և սա դիմացի բարձր բլուրին վրայ, գեղարդն ու սպունգը եղէգով միասին:

Ցիսուսի հրաշալի անօրէնութիւններու նշաններ, ինչպէս աւետարանները կը պատմն: Քանի՛ անգամեր ժայռերու մահասարսուած գագաթներուն վրայ ուր կը կարծէի թէ ես եմ առաջին ուռք գնողը, գտայ նոյն նշանը

կամ կանգնած և կամ քարի մը վրայ փորուած, և ով դիտէ քանի տարիներ առաջ՝ որոնց ձեռքով և ի՞նչ յիշասակով: Այդ դեօք չարշարուած ճամբրոր մը զայն թուուց յիշաստակ իր անցնելուն, կամ յիշասպէկ իր ընկերին որ այնտեղ եկելով մահուան կանդիպեցաւ և զայն մերձաւոր պատշաճ տեղ մը թագեցին, կամ վերջնելով վարքերին իր հայրներէք, կամ մօտիկ գիւղակը:

Եւ ի՞նչ են այն ցած ապարակին մէջ, որ ժամէի շուրջի տակն է, անջուք պատով զատուած միւս ագարակներէն, հաւաքուած այն խիս խիս մեծ ու պզտիկ խաչերը, գիւղացներու չէրկուած այս գետանին վրայ, որոնք մերձակայ գաշտերուն մէջ աշխատելէն վերջ, այժմ աննց քոյ վերջին քնով կը հանչչին, քիչ մը հեռու այն խաճիթէն ուր իրենց աշքերը բացին դէպ ի կենաքի լոյսը:

Երեք հատ ապարակներ, կեանքի, աշխատանքի և մահուան, իրարու մօտ և երեքն ալ հովանաւորուած Քիսուսի նոյն խաչով: Եոյն բանն է կ գիւղերու և խոնուած քաղաքներու մէջ, ամենամեծ չէնքերուն և աշտարակներու ծայրն ալ թագ կապած կը տեսնուի այս նշանը, ինչպէս թէ այս ամէնը ստացուածք են Ծիսուսի: Տես մէյ մը շուրջէ և պիտի տեսնես աւելի այդ նշանը յանախուած քան ուրիշ նշաններ, չէն և անշէն տեղեր, ճամբաններու ծայրն ու խաչաձեւի վրայ, սահմանաքարերու, և աղջիւրներու վրայ, գոմերու մէջ, գաւազաններու վրայ, հասարակաց և առանձնականաց չէնքերուն վրայ: Եւ աւելի տիրապետող տեսքով անթիւ հաւատացեաններու վրայ, բարձրաներու թագին և թագուցիններու ապարաջին վրայ, Դիօնչներու վրայ, պատուանշաններու վըրայի իշխաններու և սպաններու կործքին, գիւղուաններու սրի երխասակալին վրայ, օրիորդներու պարանոցին գեղեցիկ մանեակներու վրայ, երիտասարդին խրսիտ ուսերուն վրայ, վիշն կախուած մաքուր կրյան, հարսին չըարշին և փեսայի ճարմանդին վրայ: Եւ անապատի միայնակեցի մէջքին վրայ, որ թողով աշխարհն և աշխարհի բաններու վրայ, երիտասարդին խրսիտ ուսերուն վրայ, վիշն կախուած մաքուր կրյան, հարսին հովարշին և փեսայի ճարմանդին վրայ:

երկնքի ճանապարհի գտաւզանցու Եւ երբ այդ ճանապարհը վերջանայ և այս զրաւզանքներով իր աշխարհն աներեւութանաց մեծերու և փոքրերու աշքերէն, ըլլայ թու գաւոր, ըլլայ ճգնաւոր, նոյն խաչը զսեմ և խաղաղ, պիտի հանգչի կենակի զուարձութիւններէն մեկուսացու սրտերուն վրայ, ինչպէս նշան մը յաղթուած մահուան և ապագայ յարութեան:

Այսքան մեծ է տեսարանը Քիսուսի խաչին, ամենազօր, ամէն կողմ տարածուած, զորութեամբն ահաւոր, խորդդաւոր և ամենաարաքր նշան մը, որուն գագաթն երկինքներու մէջն է, և բռնը գժոխի զրան վրայ, անոր թեւերը արեւեքէն արեւմուաք ձբդուած կը գրկին բոլոր մարդկութիւնը, գըղուերլ հաւատացեաները, իրեն քաշերլ անհաւատը, զիտուններու իրեր զարմանալի խորհուրդ մը, տպէտներու քաջակերութիւն, գայլքաղածներուն փրկութիւն: Քեզ աւէ, ո՞վ յամառած իմաստակ որ խելուպատակդ կը տանջնա, քեզ ալ ասիկայ առեզծուած մը անւուժանելի: Եթէ անզամ մը գէթ ուզիդ դատեն, պիտի տեսնես թէ ինչպէս այն որ ոչ հելլէն հանճարը, ոչ Լատինի լեգէնները, ոչ հիւսիսի հրոսակները, ոչ դիւթիչ ոսկին, և ոչ բանաւորներու հրամաննելը կրցան, այս մաշարյու և ամենաարդ գործիքը կրցաւ և ըրաւ: Բոլոր աշխարհ բռնեց, նուանեց զայրագ բարբարոն ու Հեղարարն, հուսազուժ ազգերը, Յոյնը Գործացին, Արտամյացին և Արիականները:

Անթիւ հազարներով բանակ մը, պանչելարաշ զինուորութիւն մը, որ շատ անգամ ոչ թէ կը յաղթանակէ թշնամիներ չարդերլ, որչափ ինքնին գէւի ի մահ գիտելով, սրտերը կը գրաւէ, և սիրոյ շղթաներով իր ետեւէն կը ճպէ: Եթէ Յիսուսի և իր հետեւողներուն գործերը զարմանալի բաներ են, անոնց վրայ քու չզարմանալի ինձ աւելի զարմանալի կը տեսնուի, ո՞վ իմաստաւակը կոչուածք:

Ինչ որ արդէն, Աւետարանի քարոզուածեան սկիզբէն, գուշուկի լով հաստատեց Անոր ամենամեծ քարոզիչը Պօղոս թէ՝ ըստ առուգիս այս բան աշխարհի իմաստութեան:

բու աշքին յիմար գործ մը պիտի երեւի որովհետեւ այդքան մեծ ու տիեզերական հոչակով զարդապետութիւն մը՝ կամ սարսափիկի մուրութիւն մը պէտք է ըլլայ, կամ անըմբռնելի իմաստութիւն մը: Կարելի է գտաել և ընտրել երկուքին մէջ, քննելով Աւետարանի արդիւնքները. դիւրին է տեսնել թէ ի՞նչ էր աշխարհի քարոզութեան սկիզբները և ինչ եղաւ անմիջապէս վերջը: Ինչ պիտի անարագ աղմի մէջ կը թաւաէլը մարդուս սիրտը և ինչպիսի սրբութեան բարձրցաւ յանկարծ: Ինչպիսի քացցր խաղողագութիւն մը ստացաւ մէկէն հոգին, և ո՞րպէս վստահ և ապահով կ'անցնի այս աշխարհէն գէւի ի միւս անծանօթ աշխարհը:

Եթէ ասոնք ալ քննելով իմաստաւէրը պիտի յամուի գարձեալ գուրս մնալ Յիսուսի գաւելիթէն, թող ըլլայ անոր համար «Ճառ խաչին՝ յիմարութիւն», այլ գրկեցու մեզ՝ ... Աստուծոյ զգութիւն և Աստուծոյ իմաստութիւն»: Այս խօսքերով տըկարներ զօրցաց և յիմարներ իմաստնացած աշխարհիներու առջեւ՝ այնպիսի ճամբաների անցան ու գացին, որ ոչ գիտուն համարուածները տեսած էին, և ոչ գիւցալն կոչուածները ստք կոխած: Որքան գարերը բարգութին՝ ոչ մէկ տարի պիտի անցնի տուանց ուշադիր քննութեան և հիացման այդ վաղմի օրերուն. ուր Յիսուսի աշխարհաներուն հետքերն ու գործերն անջնջելի գրոշմուած կը մնան, այդ սակաւաթիւ և երկուոտ, կոպիտ և անոուն անտէր մարդերուն, որոնց գործերուն նման մեծ այն աշխարհի վրայ չկայ: Անոնք զնզօրէն իրենք զիթինք մահուան յանձնեցին ամենաչին Յիսուսին օրէնքներուն համար. ազգեր և բազմութիւններ՝ իրենց հնագարեան և հայրենի հաւատքէն դարձուցին նոր հաւատքի մը, և այն առանց ո եւ է բռնութեան, առանց հրապուրելու, առանց խարէութեան: Ինչպէս այն անարագ և չնչին արարածները, զորս չի գիտեր բնախօսութեան, զեռուններ անուաննել թէ բոյ կոմ բորբոս, որոնք ովկանոնսի անդունդներէն, կէաերու բազմութեան մէջէն, լեռնացած ալիքներու խըսովքէն, հանդարս ու մեղմ շարժեւով վեր

կը բարձրանան, բարդուելով կողելով ու վերանալով մինչեւ ծովսն բաց երեսը, և անկից ալ զեռ աւելի վեր պարսպի ձևով բռնսկեն ապաւանեներ կը ձեւացնեն, ծովերու մէջ խրամատներ կը բանան, ժայռեր դուրս ցցելով՝ արագալազ նաւերուն խորտակիշ ու սարսափ կը գտանան:

Հոմէական պետութեան բռնաւոր բազովը, կարծեց թէ մէկ հարուածով արմատափիլ պիտի ընէ նորատունկ աւետարունը, ինչպէս մշակը որ գաղձը կը քրցնէ իր այդին, և ոչ թէ միան շկրցաւ բուրու իր սարսափիլ ու ոստովը, այլ և ոչ իսկ հեթանոսութեան ընդարձակածաւալ անդաստանները կրցաւ պաշտպանել ուր համաճարակի պէս կ'ածէր և կը ծածէկը երիշաւոր մշակն սերմը: Յաղթողներն են ընկառոները բովանդակ Պաշտարհիս, իրենց ամբողջ զօրութիւնը գարձուցին քրիստոնեաներու փոքրաթիւ անպէն և անդիմադիր խազազ հօտին դէմ, հին ու նոր մեկենաներով, զարհուրեկը տանջանքներով՝ որոնց նմանը դեռ չէր հնարիւած, կրակն ու սուրը, ձէթն ու ձիւթը, չուանները, ու բեւենները, փոկերն ու երկաթները, վերջապէս ամէն տեսակ նիբեր վրէժի գործիք եզան, կեանքեր մաշեցներ և սպասելու համար. Հազարներ և բիւրաւորներ առապստ կ'ինային թագաւորներէն, և սակայն քրիստոնէութիւնը չէր նոււափիր, մանաւանդ թէ օրէ օր կ'ոււանանը, կը բազմանար. Կարծես թէ թափուած արիւներու կաթիւները, արգասաւոր երկրի մէջ ցանուած ցորենի հաստիկներ ըլլային որոնք մէկ հատին փոխարէն երեսնաւոր, հարիւրաւոր պըստուզ կու տային, անուշահու ծովսի նման տարածուելով առանց արգելով կը թափանցէին տուներէն և սրտերէն ներս, ամայի անապատներէն սկսած մինչեւ նոյնինքն հաւալածող կայսրերուն ուսկեծեղուն պալատները: Ամէն վիճակէ ամէն սեղէ կ'որսար ու կ'եւրացնէր, ամէն սահմանի վրայ Յիսուսի նըսշանը կը կանգնեցնէր, ամէն գահի վրայ և սամարի մէջ ինչպէս իշխանութիւն մը վեր կ'անցնէր ու նազելով կը բազմէր Փլաւեաններու բոլորակ ամիկիթատրոնը կը յուար նաւ-

հաստակներու արիւնով Ամենադից մեջեանը կը մերկացնէր խառնիճաղունն աստուածներէն փոխելով զայն տաճար ամենայն սրբոց, Յիսուսի և կուսամօր հետեւղներուն:

Կը սիրեմ այժմէիկ հիանալ քու եռանդուն քարոզութիւններուգ վրայ ով Պետրոս, քու հրաշալի սիրաբանութիւններուգ վրայ Որդիկ Որսուման, որանց ոչ մէկը հին թէ նոր փիլառայ, կրցաւ գիմագրել, և եթէ եղան որ ճիկ մը հանեցին, աննոնք ալ պապանեցան քրիստոնէութեան ջտաւգովներէն: Ո՛չ որպիսի զարմանալիք, ահա քան գարեր քահանաներ գարգապեաններ գաս առ գաս անդադար կը յաջորդեն իրարու. ահա Աստուծոյ սրբամաքուր խօսքը, որ գետի մը նման բիսած վիստ աղբիւրէ, առանց պղտորելու, առանց ցարքելու, ալիք ալիք կ'երթայ և կ'աճի:

Կը զմայիմ տակաւին անթիւ նահատակներու երամին տեսիլներով, ոչ միայն հասուն մարդեր, այլ և փոքրիկ մասնուկներ, փափկութեան մէջ մասած տիկիններ և օրիորդներ և պարկեշտասաւն կուսաններ, որոնք կը ստրափէին եթէ իրենց քավին ստուեր մը խոյս տար, կամ տերեւ մը խշրալով իշխար: Ի՞նչպէս հիմա անվախ և համարձակ կը կանենին գաժան դատաւորներու տաხեանին առջև, ըմբիշներու մարտկոցին մէջ, վայրենի ցուլերու և առիւծներու կրկէններ, եացած կաթասներուն մէջ և կարմիր կասակարաններու վրայ. Փուշ և բեւեն գամած մերկ սովերով՝ կը պարեն իրեւեւ ծաղկներու և սերեւններու փափուկ գորգերու վրայ. Ծնողներուն մէջ նետուած կարեն հովցներու տակ ըլլային, խարոյիկ վրայ՝ իրենց մատաղ մատները երկարելով կայծակներ կը հաւաքեն իրենց նազելի գիտուն իրենք իսկ պասկ կազմելով, իրեւեւ նշանակ այն երկնաւոր անթառամ պասկին զոր հոգեղէն աշքով շատ մօտ կը տեսնէին: — «Ես քրիստոնիայ եմ, ես ալ քրիստոնեայ եմ» կանչելով կը մեռնին երկրի համար, կ'անմահանան երկնիք և երկրի մէջ. Հազարաւոր կեանքերէն աւելի նախամեծար կը համարին իրենց մաքուր կուսութիւնը և հաւատքը առ Քրիստոս, անոր համար

միայն ողջ անարտատ պահելով, իրեւ նորած ծագ հարն մը իրենց սիրոն ու հոգին:

Այսպէս գեռ ուրիշ շատեր ալ թէպէտ արինարրու ուրոք շատիպեց, ուրիշ տեսակ անարին և ամէնօրեայ գոհաբերումով բուրովին կ'ողջակիզուին. անդորր վանքերու և մոոցուած կուսաստններու մէջ ապաստանած, ճգնութիւններով և հսկումներով, զգայարանքներու մշտնչենաւոր մեռելութեամբ չնորդի այն փափկասուն ծիլը անբժ և անտրատ կը պահէն:

Երկուքն ալ հանալի, երկուքն ալ գիւցազնական, այս որ արիւնով իրեւ փարգերով պճնուած, այն որ անարին իրեւ չուշաններով սպիտակացած. արժանաւոր գործ հզօր քանչերու և հսկաններու, տկար և գիւցաբեկ մարմնով կատարուած, որպէս սքանչելիք հեթանոսներուն, որպէս ամօթ իմաստասէրներուն, քաջալեր առաքինիներուն և

պարօտաներ քու խաչիդ, Քրիստոն Աստուած:

Արժան և իրաւ է մեծագոյն պատիւը տալ անոր՝ որ ամենագերազոյն, ամենահրաշալի, փրկութեան ամենամեծ գործը, որ աշխարհիս վրան միակ կարելին էր, Անմաշին մահէր, և մարդերու ապահով փրկութիւնը, իր գրան կը կրէ: Այս նշանին առաջն ամէն յշատակ և նշան կը մոոցուի. կը ցնդի աշխարհի ամէն երեւոյթ. ինչպէս հիմա, երբ արեգակը լեռներու թումբերուն ետեւ խոնարհելով, կը նուազին օրական տեսիները խիստ մթութեան քող մը շուրջն կը տարածուի, այնտեղ ամէն տեսիլ տածկիլով, որոնց մէջ միայն այս սեւատեսիլ խաչը կը տեսնեմ գիլու վերեւ տարածած անխոնջ բազուկները հսկելու, պահելու խաղաղ բնութիւնը...

(Եարութակիիթ)

Հ. Վ. ՑՈՎՀԱՆՆԵՍԻԱՆ

ՀՈՒՆԳԱՐԻՈՅ ՎԱՐՉԱՊԵՏԸ ԿՈՄՄ ՍՏԵՓԱՆ ՊԵԹԼԵՆ

ՍՈՒՐԲ ՎԱԶԱՐՈՒՄ ՄԵԶ

Ս. Պազարու հմայքը բազմաթի կայսրեր, արքաներ և մեծամեծներ հիւրընկալած է իր առեւելան խորհրդապատութեամբ քողակուած մնաստանին մէջ, Սակայն այն մտերմութիւնը որ զգաց Հունգարիոյ ազիւ և հերոս ազգի փարապահի հանդէպ, անսովոր մեր գարարաւոր տարագործեան ճամբուն վրան հանգրանքուաներ եղած են, եղայրաբար բանենով իրենց սեղանը, հին և ազնւական ցեղի մը տարաբախտ զաւակներուն վաճախնեն այդ ազգերու առաջիններէն են: Ոչ մէջ հայ անգիտակից է Հունգարիոյ և անսր անքածան թրանսիլվանիոյ մասին և թէ ունինք հն հազարաւ եղայրներ որ նոյակապ և թշուառ Անիի զաւակներն են Անա թէ ինչու մտերիմ էր առնուաչոր հիւրին զալուստը:

Ապրիլ 10ի հէսօրէն վերջն էր սպիտակ մաշոյկ մը խառնուեցաւ լճակի մէջ անդրաբարձ կարմիր պատերու ներկած շրերուն բարձրա-

հասակ, նիհար, բայց ազնուական ու խոհական տիպարով Վարչապետը ոսքը կղզիի ափին գրաւ, և անոր հոնեւեցան, հոնզար. Նախարարութեան բարձրաստիճան անձնաւորութիւններ: Հիւրիրը գիմաւորեցին Գեր. Ալբանայր Հ. Ցովհան Վ. Ազգերեան և շատ մը վանականներ:

Վանեստկոյ մէջ, Վարչապետը միակ և առաջն այցելութիւնը Հայոց կղզիին տուաւ, ինչ որ ըմբակեցաւ տեսացիներու ու ազգարդութենէն:

Պաշտօնական ճեւակերպութիւններէն վերջ սկսան թանգարաններուն հայկական հնութիւններու այցելութեան: Նախ եկեղեցւոյ մէջ տեսան հիտակից Մարգարիտա թագուհուոյն նըւիրած հրաշալի գարագոյր, ապա եկեղեցական սպասներու հայկական նրբաթէլ հին հրաշակերտները: Անցնելով թանգարան, Վարչապետը հնատագրութեամբ զննեց Վոմիան և իր 8000 ամնայ փայտ սնտուկը, Քանովայի Խկլոնը, նոյնական պապիրոսը, կղմէս ՃԳ. մարմարէ